



ՄԱՐԲԵԹԻՆԳ

ՄԻՔԱՅԵԼ ՄԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀՊՏՀ կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԲԻԶՆԵՍԻ ԶԱԽՈՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ի՞նչ է ձեռնարկատիրական ծախողումը, և ինչո՞ւ են որոշ ձեռնարկություններ
և/կամ ձեռնարկատերեր ծախողվում: Այս հարցերի շուրջ շարունակվում են գիտական
բանավեճերը, որոնք ընթանում են երկու մոտեցման շրջանակներում: Դրանցից մեկը
փորձում է ծախողումը բացատրել ձեռնարկատիրության գոյատևման առումով, իսկ
երկրորդը դա մեկնաբանում է ձեռնարկատիրոջ ընկալման տեսանկյունից: Ուսումնա-
սիրություններում բավարար ուշադրություն չի դարձվում ձեռնարկատիրական ծախ-
ողման տեսանկյունից բանական վերաիմաստավորմանը: Այդ բազմաբնույթ և բազմա-
կողմ երևույթի համընդգրկուն ընկալման վերաբերյալ աշխատանքները սակավաթիվ
են: Հոդվածի նպատակն է ձեռնարկատիրական ծախողման օբյեկտիվ ընկալման հա-
մար առաջարկել «շուկա-պետություն / կազմակերպություն-անհատ» ձևաչափով
հանդիսակազմ ծախողումների վերլուծություն՝ օգտագործելով միասնական տեսա-
մեթոդական հիմք:

Հիմնաբառեր. ծախողում, ծախողման մոտեցում, հանդիսակազմ ծախողում
JEL: M2, M20, M29

Քանի որ ձեռնարկատիրությունը դիտարկվում է որպես տնտեսական
աճին նպաստող գործոն¹, հետևաբար՝ շուկայից կազմակերպությունների
և/կամ ձեռնարկատերերի ելքի հետ կապված հարցերի նկատմամբ հետա-
քրքրությունն օբյեկտիվ բնույթ ունի: Անցած դարի 90-ականների վերջերին

¹ Տե՛ս Minniti M. & Levesque M., Entrepreneurial types and economic growth. Journal of Business Venturing, 2010, 25 (3), էջ 305–314:

ծեռնարկատիրությանն առնչվող ուսումնասիրությունները առավելապես վերաբերում էին ծեռնարկատիրական հաջողությանը²: Բիզնեսի գոյատևման հետ կապված՝ փորձ էր արվում մեկնաբանել ծեռնարկատերերի հաջողությունը և սնանկացումից խուսափելու նրանց անընդունակությունը: Թեև, ըստ վիճակագրական տվյալների, բիզնեսի ծախսողման հավանականությունն ավելի մեծ է, քան հաջողությանը³, ծախսողման գործընթացը շարունակում է մնալ քիչ ուսումնասիրված⁴: Առկա ուսումնասիրությունների մեծ մասը հիմնականում անդրադառնում է բիզնեսի դրական ընթացակարգերի վերլուծությանը (օրինակ՝ նոր բիզնես սկսելու որոշում)⁵: Փոքրաթիվ են, սակայն, այն հետազոտությունները, որոնք դիտարկում են բիզնեսի բացասական ելքերը (օրինակ՝ ծեռնարկատիրության դադարեցման որոշում): Սա է պատճառը, որ այսօր շատ ուսումնասիրություններ կենտրոնացնում են ոչ այնքան ծեռնարկատիրության դրական, որքան բացասական ելքերի վրա⁶՝ հատկապես ծախսողման իրադարձությունից խուսափելու առումով⁷: Վերջին հաշվով, պետք է ընդունել, որ չի կարելի լիովին հասկանալ ծեռնարկատիրության էությունը՝ չպատկերացնելով դրա ավարտը⁸:

Իրականում հնարավոր չէ գտնել ծեռնարկատիրության ծախսողման պատճառների և ելքերի վերաբերյալ հարցերի միարժեք պատասխան, քանի դեռ դրանք շարունակում են ընկալվել որպես հոմանիշներ: Հարցի պարզաբանումը հեշտ չի լինի, քանի դեռ ծախսողումը դիտարկվում է որպես «միակողմանի երթևեկության գործընթաց»՝ ելք շուկայից: Մինչդեռ, երևույթի պատճառահետևանքային կապերն արտացոլվում են երկկողմանի ազդեցություններով: Որպես կազմակերպության և/կամ ծեռնարկատիրոջ ծախսողում կարող է համարվել ոչ միայն ելքը շուկայից, այլև ելքը ծախսողված պետությունից, ինչպես նաև ծախսողված շուկայի ելքը տնտեսության ոլորտից:

Այսպիսով՝ ծախսողումը ոչ միայն բազմաչափ և բազմաձև երևույթ է, այլև պատճառահետևանքային կապերի երկկողմանի գործընթաց: Դա բազմաչափ է, քանի որ հաճախ դիտարկվում է կազմակերպության կամ անձնային մակարդակով վերլուծության պարագայում⁹: Չախսողումը բազմաձև է, քանի որ կարող է հանդես գալ տարբեր ձևերով (փակում, սնանկացում, վերավաճառք)¹⁰: Վերջապես՝ ծախսողումը երկկողմանի գործընթաց է, որովհետև կարող է դրսևորվել ինչպես շուկայից ելքի ձևով, այնպես էլ ծախսողված շուկայում մնացող ծախսողված ծեռնարկատիրոջ տարբերակով կամ էլ ծախսողված պետությունից բիզնեսի ելքի ձևով:

² Տե՛ս **Cooper A. C.**, Challenges in Predicting New Firm Performance. *Journal of Business Venturing*, 1993, 8 (3), էջ 241–253:

³ Տե՛ս **Hayward M. L. A., Shepherd D. A., Griffin D.**, A hubris theory of entrepreneurship. *Management Science*, 2006, 52 (2), էջ 160–172:

⁴ Տե՛ս **McGrath R. G.**, Falling forward: Real options reasoning and entrepreneurial failure. *Academy of Management Review*, 1999, 24 (1), էջ 13–30:

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 241–253:

⁶ Տե՛ս **Wennberg K., Wiklund J., DeTienne D. R., Cardon M. S.**, Reconceptualizing entrepreneurial exit: Divergent exit routes and their drivers. *Journal of Business Venturing*, 2010, 25 (4), էջ 361–375:

⁷ Տե՛ս **Cardon M. S., Stevens C. E., Potter D. R.**, Misfortunes or mistakes? Cultural sense making of entrepreneurial failure. *Journal of Business Venturing*, 2011, 26 (1), էջ 79–92:

⁸ Տե՛ս **DeTienne D. R.**, Entrepreneurial exit as a critical component of the entrepreneurial process: Theoretical development. *Journal of Business Venturing*, 2010, 25 (2), էջ 203–215:

⁹ Տե՛ս **Wennberg K.**, Entrepreneurial Exit. In L. P. Dana (Ed.), *World Encyclopedia of Entrepreneurship*, 2011, էջ 170–177:

¹⁰ Տե՛ս **Wennberg K., Wiklund J., DeTienne D.R., Cardon M.S.**, նշվ. աշխ., էջ 361–375:

Շատ ձեռնարկատերեր դժվարանում են հասկանալ, որ ապագան իրենց սպասածի նման չէ: Նրանց մեծ մասը կարծում է, որ ապագան պարզապես ներկայի էքստրապոլյացիան է՝ ուղիղ ճանապարհ, որ ձգվում է հորիզոնում:

Ձեռնարկատիրական ծախսողման տեսամեթոդաբանական հիմունքները

Գրականության մեջ օգտագործում են «ծախողում» բառի տարբեր նշանակություններ: Հաճախ դա ներկայացվում է կազմակերպության սնանկության կամ անվճարունակության հասկացությունների միջոցով¹¹: Երբեմն այդ մեկնաբանությունները լրացվում են այնպիսի տարրերով, ինչպիսիք են «ռիսկային բիզնեսի մասնակիցների անձնական սահմանափակումները»¹² կամ «անբավարար ռաջիոնալ եկամտի ապահովումը»¹³: Ենթադրվում է, որ ծախողման պատճառները պայմանավորված են ոչ թե կազմակերպության գործունեությամբ, այլ ձեռնարկատերերի անձնային հատկանիշներով, այդ թվում՝ ձեռնարկատիրության արդյունքների նկատմամբ նրանց դրական և/կամ բացասական զգացումներով:

Ձեռնարկատիրական ծախողումները բաժանվում են երկու խմբի՝¹⁴ կուպիտ ծախողումներ և ծախողումներ սխալների պատճառով: Ընդ որում, կարծիք կա, թե ծախողման դեպքերի ավելի քան կեսից կարելի է խուսափել, քանի որ դրանք առաջ են գալիս կատարված սխալների (ներքին կայուն հատկանիշների) պատճառով: Ձեռնարկատիրության ծախողման ուսումնասիրությունների համար իբրև տեսական հիմք են ծառայում կազմակերպությունների պոպուլյացիոն էկոլոգիայի տեսությունը (population ecology of organizations theory)¹⁵, ռեսուրսային տեսությունը (resource-based view theory)¹⁶ և շեմային տեսությունը (threshold theory)¹⁷, որոնք իրենց արտացոլումն են գտել ծախողման դետերմինիստական¹⁸, վոլյունտարիստական¹⁹ և զգացմունքային²⁰ մոտեցումներում:

Ծախողման դետերմինիստական մոտեցում

Դետերմինիստական մոտեցումը հիմնվում է կազմակերպության պոպուլյացիոն էկոլոգիայի տեսության վրա, որի համաձայն բիզնեսի հաջողությունն արտահայտվում է դրա գոյատևմամբ: Հաջող է համարվում այն բիզնեսը, որն առնվազն մի քանի տարի ապահովում է իր գոյությունը: Հաճախ առաջարկվում են հաջողության հայեցակարգը կապել բիզնեսի գոյության հատկապես սկզբնական փուլի հետ, քանի որ գործունեության այդ վաղ շրջանն է վճռո-

¹¹ Տե՛ս Zacharakis A.L., Meyer G.D., De Castro J., Differing perceptions of new venture failure: a matched exploratory study of venture capitalists and entrepreneurs, Journal of Small Business Management, vol.37, 1999, n.3, էջ 1–14:

¹² Տե՛ս Singh S., Corner P., Pavlovich K., Coping with entrepreneurial failure. Journal of Management & Organization, 2007, 13 (4), էջ 331–344:

¹³ Տե՛ս Everett J., Watson J., Small Business Failure and External Risk Factors. Small Business Economics, 1998, 11(4), էջ 371–390:

¹⁴ Տե՛ս Wennberg K., Wiklund J., De Tienne D.R., Cardon M.S., նշվ. աշխ., էջ 361–375:

¹⁵ Տե՛ս Hannan M.T., Freeman J., The population ecology of organisations. Am. J. Sociol. 1977, 82 (5), էջ 929–964:

¹⁶ Տե՛ս Wernerfelt B., A resource-based view of the firm. Strateg. Manag. J., 1984, 5 (2), էջ 171–180:

¹⁷ Տե՛ս De Tienne D.R., Shepherd D.A., De Castro J.O., The fallacy of “only the strong survive”: the effects of extrinsic motivation on the persistence decisions for underperforming firms. Journal of Business Venturing, 2008, 23 (5), էջ 528–546:

¹⁸ Տե՛ս Everett J., Watson J., նշվ. աշխ., էջ 371–390:

¹⁹ Տե՛ս De Tienne D.R., Shepherd D.A., De Castro J.O., նշվ. աշխ., էջ 528–546:

²⁰ Տե՛ս Nabil Khelil, The many faces of entrepreneurial failure: Insights from an empirical taxonomy, Journal of Business Venturing 31, 2016, էջ 72–94:

րոշ դեր կատարում ձեռնարկատիրության կայունացման առումով²¹: Համարվում է, որ նորաստեղծ կազմակերպությունների համար հիմնական ռիսկերը ոչ թե նոր շուկա գտնելն է, այլ գոյություն ունեցող շուկայում հաստատվելը²²:

Սովորաբար շուկայից կազմակերպության ելքը բացատրվում է ձեռնարկատիրության արդյունավետության անբավարար մակարդակով, ինչը ենթադրում է կազմակերպության վաճառք, գործունեության դադարեցում կամ փակում: Ըստ պոպուլյացիոն էկոլոգիայի տեսության՝ ենթադրվում է, որ բիզնեսի գոյատևումը և հաջողությունը հոմանիշներ են²³, իսկ կազմակերպության փակումը և ելքը շուկայից՝ ծախողման հոմանիշներ²⁴: Սակայն հարկ է նկատել, որ չի կարելի միարժեքորեն համարել, որ շուկայից ելքն ու ծախողումը հոմանիշներ են, քանի որ կազմակերպությունը կարող է փակվել կամ վաճառվել նաև դրական հիմքերով²⁵, այդ թվում՝ ներդրումների հետքերման, այլ գործունեությամբ զբաղվելու ձեռնարկատիրոջ նկատառումներով, ինչպես նաև բիզնեսի միգրացիայի պատճառով և այլն, որոնք ծախողում չի կարելի համարել²⁶: Տարբերում են ձեռնարկատիրական ելքի երկու տեսակ՝ «ծախողում» լավ աշխատանքի հետևանքով (ցանկալի ելք)²⁷ և ծախողում աշխատանքի վատ արդյունքի հետևանքով (անցանկալի ելք):

Հատկանշական է, որ ձեռնարկատիրական ելքերի ավելի քան կեսն անցանկալի է,²⁸ ընդ որում՝ անցանկալի է ինչպես ձեռնարկատերերի²⁹, այնպես էլ շրջապատին համար³⁰: Ուշագրավ է այն հանգամանքը, որ միայն բացասական ելքերով չի կարելի քանակապես գնահատել ծախողումների ընդհանուր աստիճանը, քանի որ ծախողված կազմակերպությունները կարող են նաև մնալ շուկայում ելքի խիստ արգելքների պատճառով:

Ըստ դետերմինիստական մոտեցման՝ ձեռնարկատիրական ծախողումը կապված է բիզնեսի ռիսկային վախճանի հետ: Այս դեպքում ձեռնարկատիրական ծախողումը ներկայացվում է «կազմակերպության մահ» եզրույթով³¹, որը երբեմն կապում են սնանկացման իրավիճակի հետ³², երբ ծախողումը իրավական հիմքեր ունի:

Դետերմինիստական մոտեցումը ենթադրում է, որ բիզնեսում նոր իրադարձությունները, օրինակ՝ ծախողումները, տեղի են ունենում ձեռնարկատերերի կամքից անկախ, նրանց կողմից չվերահսկվող արտաքին միջավայրի

²¹ Տե՛ս **Littunen H., Storhammar E., Nenonen T.**, The survival of firms over the critical first 3 years and the local environment. *Entrepreneurship & Regional Development*, 1998, 10 (3), 189–202:

²² Տե՛ս **Hay M., Verdin P., Williamson P.**, Successful new ventures: Lessons for entrepreneurs and investors, *Long Range Planning*, 1993, vol. 26, n.5, 31–41:

²³ Տե՛ս **De Tienne D.R., Shepherd D.A., De Castro J.O.**, նշվ. աշխ., էջ 361–375:

²⁴ Տե՛ս **Wennberg K.**, նշվ. աշխ., էջ 170–177:

²⁵ Տե՛ս **De Tienne D.R., Cardon M.**, Impact of founder experience on exit intentions. *Small Bus. Econ.*, 2012, 38 (4), 351–374:

²⁶ Տե՛ս **Wennberg K., Wiklund J., De Tienne D. R., Cardon M.S.**, նշվ. աշխ., էջ 361–375:

²⁷ Տե՛ս **De Tienne D. R.**, նշվ. աշխ., էջ 203–215:

²⁸ Տե՛ս **Wennberg K., Wiklund J., DeTienne D.R., Cardon M.S.**, նշվ. աշխ., էջ 361–375:

²⁹ Տե՛ս **Hayward M. L. A., Shepherd D. A., Griffin D.**, նշվ. աշխ., էջ 160–172:

³⁰ Տե՛ս **Vaillant Y., Lafuente E.**, Do different institutional frameworks condition the influence of local fear of failure and entrepreneurial examples over entrepreneurial activity? *Entrepreneurship & Regional Development*, 2007, 19(4), էջ 313–337:

³¹ Տե՛ս **Mellahi K., Wilkinson A.**, Organizational failure: a critique of recent research and a proposed integrative framework, *International Journal of Management Reviews*, 2004, 5-6 (1), էջ 21–41:

³² Տե՛ս **Singh S., Comer P. & Pavlovich K.**, նշվ. աշխ., էջ 331–344:

գործոնների անխուսափելի ազդեցության հետևանքով³³: Հետևաբար, որպես կանոն, առաջնային է համարվում ձեռնարկատերերի կողմից չվերահսկվող էկոլոգիական պայմանների կենսական կարևորությունը, որոնց ճնշումը և սահմանափակումները հանգեցնում են կազմակերպության ծախսողման: Այս մոտեցումը բացառում է մշտապես անարդյունավետ գործող կազմակերպությունների գոյությունը շուկայում, որոնք ավելի շատ ռեսուրսներ են ծախսում, քան ստեղծում: Համարվում է, որ այդպիսիք պետք է հանվեն շուկայից, ինչն, ըստ էության, ենթադրում է անարդյունավետ կազմակերպությունների «էֆ-տանազիայի» կիրառում:

Ձախողման վոլյունտարիստական մոտեցում

Վոլյունտարիստական մոտեցումը հիմնվում է կազմակերպության ռեսուրսային տեսության վրա և չի ընդունում այն տեսակետը, որ ձեռնարկատերերն անգոր են կանխելու հնարավոր ծախսողումները³⁴: Այս մոտեցումն ընդունում է կազմակերպության ռեսուրսների գերակա դերը և փորձում բացատրել, թե ինչու միևնույն պայմաններում որոշ կազմակերպություններ հասնում են հաջողության, իսկ որոշները ծախողվում են: Այս մոտեցմամբ՝ ծախողումը կախված է գործոններից, որոնք չեն դասվում ձեռնարկատերերի վերահսկողությանը չենթարկվող գործոնների շարքին³⁵: Ըստ վոլյունտարիստական մոտեցման՝ ծախողումը կախված է տնտեսական գործունեության այնպիսի դրսևորումներից, ինչպիսիք են ֆինանսական ճգնաժամերը, բացասական եկամտաբերությունը և անվճարունակությունը: Այս մոտեցման համաձայն՝ ձեռնարկատիրական ծախողումը կամ ելքը բացատրվում են ռեսուրսների (կապիտալ ակտիվներ, մարդկային կապիտալ) անբավարար մակարդակով: Այլ կերպ ասած՝ տեղի է ունենում եկամուտների մակարդակի այնպիսի անկում և/կամ ծախսերի այնպիսի ավելացում, որ կազմակերպությունը դառնում է անվճարունակ և չի կարողանում ներգրավել նոր դեբիտորներ կամ նոր ֆինանսական ռեսուրսներ: Հետևաբար՝ նա չի կարող գործել ընթացիկ սեփականության և կառավարման շրջանակներում:

Ըստ վոլյունտարիստական մոտեցման՝ ձեռնարկատերերի որոշումներն են դառնում ծախողման հիմնական պատճառները³⁶: Հետևաբար՝ կենտրոնացնելով կազմակերպության ռեսուրսները, ձեռնարկատերը կարող է խուսափել ձեռնարկատիրական ծախողումից: Այսինքն՝ նոր կազմակերպությունները ծախողվում են ոչ թե արտաքին գործոնների, այլ ձեռնարկատիրոջ թույլ տված սխալների և անհրաժեշտ հմտությունների բացակայության պատճառով³⁷:

Ձախողման զգացմունքային մոտեցում

Զգացմունքային մոտեցումը վճռորոշ դեր է հատկացնում ձեռնարկատիրոջ շահադրդմանը: Ի տարբերություն դետերմինիստական և վոլյունտարիստական մոտեցումների, այս մոտեցումը հաշվի է առնում ձեռնարկատիրոջ հոգեբանական գործոնները, որոնք ծախողման կամ գոյատևման տեսանկյունից կարող են ավելի կարևոր լինել, քան էկոլոգիական կամ կազմա-

³³ Տե՛ս Cardon M.S., Stevens C.E., Potter D.R., նշվ. աշխ., էջ 79–92.

³⁴ Տե՛ս Mellahi K., Wilkinson A., Organizational failure: a critique of recent research and a proposed integrative framework. Int. J. Manag. Rev. 2004, 5 (1), էջ 21–41:

³⁵ Տե՛ս Cardon M.S., Stevens C.E., Potter D.R., նշվ. աշխ., էջ 79–92:

³⁶ Տե՛ս Mellahi K., Wilkinson A., նշվ. աշխ., էջ. 21–41:

³⁷ Տե՛ս Cardon M.S., Stevens C.E., Potter D.R., նշվ. աշխ., էջ 79–92:

կերպական գործոնները³⁸: Այս մոտեցմամբ փորձ է արվում բացատրելու անձնային մակարդակի գործոնները, այդ թվում՝ հոգեբանական, որոնք ծագում են ձեռնարկատիրոջ զգացմունքայնության արդյունքում³⁹ և հանգեցնում ծախսողման:

Զախողման զգացմունքային մոտեցումը հենվում է ձեռնարկատիրության ոլորտ ներմուծված անհամապատասխանության տեսության (discrepancy theory) վրա⁴⁰: Այս տեսությունը լրացնում է շեմային տեսությունը⁴¹, ըստ որի բիզնեսի գոյատևումը պայմանավորված է ոչ միայն տնտեսական ցուցանիշներով, այլև կախված է ձեռնարկատիրոջ գործունեության արդյունավետության շեմից⁴²: Ձեռնարկատիրոջ արդյունավետության շեմը արտադրողականության սահմանված մակարդակն է, որից ցածրի դեպքում ձեռնարկատերը որոշում է փակել կազմակերպությունը⁴³: Անհամապատասխանության տեսությունը ներմուծում է ձեռնարկատիրական գործունեությունից «բավարարվածություն» հասկացությունը: Այս եզրույթը հանդես է գալիս որպես անհատի ձեռնարկատիրական հաջողության հոգեբանական չափում, որը կարող է ազդել ձեռնարկատիրության պահպանման կամ դրա ելքի հետ կապված ձեռնարկատիրոջ որոշումների վրա⁴⁴: Ենթադրվում է, որ բավարարվածության մակարդակը որոշվում է ըստ անհատի փաստացի պարզևատրման և նրա նպատակների կամ սպասումների միջև խզման համապատասխանության:

Անհամապատասխանության տեսությունն ունի երկու կողմ: Մի կողմից՝ վերաբերում է նպատակների նվաճման բացթողումներին՝ ենթադրելով, որ ձեռնարկատիրոջ բավարարվածությունը որոշվում է սկզբնական նպատակի և փաստացի արդյունքի խզմամբ⁴⁵: Մյուս կողմից՝ դա վերաբերում է սպասումների և իրականության խզմանը՝ ենթադրելով, որ բավարարվածությունը որոշվում է ընթացիկ իրավիճակի և ձեռնարկատիրոջ սպասումների խզմամբ⁴⁶:

Ձեռնարկատիրական ծախսողման վերլուծության մակարդակները

Ձեռնարկատիրությունը դիտարկվում է որպես գործընթաց⁴⁷, իսկ ձեռնարկատիրական ծախսողումը՝ ելք այդ գործընթացից⁴⁸: Սովորաբար ելքի վերլուծություններն իրականացվում են երկու մակարդակում՝ անձնային և կազմակերպության, անտեսելով այն հանգամանքը, որ ձեռնարկատիրական ծախսողումը կարող է ծագել նաև պետական կառավարման և շուկայական մեխանիզմների ծախսողման մակարդակներում:

³⁸ Տե՛ս Van Gelder J.L., Vries R.E., Frese M., Goutbeek J.P., Differences in psychological strategies of failed and operational business owners in the Fiji Islands. J. Small Bus. Manag. 2007, 45 (3), էջ 388–400:

³⁹ Տե՛ս Jenkins A.S., Wiklund J., Brundina E., Individual responses to firm failure: appraisals, grief, and the influence of prior failure experience. Journal of Business Venturing, 2014, 29(1), էջ 17–33:

⁴⁰ Տե՛ս Cooper A.C., Artz W.A., Determinants of satisfaction for entrepreneurs. J. Bus. Ventur. 1995, 10 (6), 439–457:

⁴¹ Տե՛ս Gimeno J., Folta T.B., Cooper A.C., Woo C.Y., Survival of the fittest? Human capital and the persistence of underperforming firms. Adm. Sci. Q., 1997, 42 (4), էջ 750–783:

⁴² Տե՛ս DeTienne D.R., Shepherd D.A., De Castro J.O., նշվ. աշխ., էջ 528–546:

⁴³ Տե՛ս Gimeno J., Folta T.B., Cooper A.C., Woo C.Y., նշվ. աշխ., էջ 750–783:

⁴⁴ Տե՛ս Carree M.A., Verheul I., What makes entrepreneurs happy? Determinants of satisfaction among founders. J. Happiness Stud., 2012, 13 (2), էջ 371–387:

⁴⁵ Տե՛ս De Tienne D.R., Shepherd D.A., De Castro J.O., նշվ. աշխ., էջ 528–546:

⁴⁶ Տե՛ս Cooper A.C., Artz W.A., նշվ. աշխ., էջ 439–457:

⁴⁷ Տե՛ս Shane S. Venkataraman S., The premise of entrepreneurship as a field of research. Academy of Management Review, 2000, 25 (1), 217–226:

⁴⁸ Տե՛ս Wennberg K., Wiklund J., De Tienne D. R., Cardon M. S., նշվ. աշխ., էջ 361–375:

Ձեռնարկատիրական ծախսողման դինամիկայի վրա ազդում են շուկայի և պետության ծախսողումները: Ընդ որում, շուկան և պետությունն ունակ են չեզոքացնելու միմյանց ծախսողումները:

Ձախտողում պետության մակարդակում

Պետության ծախսողումների ուսումնասիրությունները հենվում են հասարակական ընտրության տեսության (public choice theory) վրա, որը ներկայում դիտարկվում է որպես քաղաքականության տնտեսագիտական տեսություն: Պետության ծախսողում ասելով հասկանում ենք Պարետո-արդյունավետության իրականացման անընդունակությունը:

Հարկ է նշել, որ պետության ծախսողումները կապված են հասարակական նախընտրությունների բացահայտման, գործակալական հարաբերությունների, անհամաչափ տեղեկատվության, բյուրոկրատական մենաշնորհի և ռենտայի համար մրցավազքի հիմնախնդիրների հետ⁴⁹, որոնք երկրում ձեռնարկատիրական գործունեության ծախսողումների էական ռիսկ են պարունակում:

Ձախտողում շուկայի մակարդակում

Շուկայի ծախսողումները որոշակի արտաքին էֆեկտների առկայություն են ենթադրում, որոնց դեպքում մարդկային կապիտալում ներդրումներ կատարող ընկերությունները և գործակալներն ուշադրություն չեն դարձնում ողջ տնտեսության վրա իրենց ներդրումների բարենպաստ ազդեցությանը:

Հարկ է նշել, որ շուկայի ծախսողումները կապված են հասարակական բարիքների, արտաքին էֆեկտների, բնական մենաշնորհի, կենսական բարիքների հիմնախնդիրների հետ, որոնք պետությունը հաճախ ի վիճակի չի լինում լուծել, ինչը հանգեցնում է ձեռնարկատիրական գործունեության ծախսողումների ռիսկի էական մեծացման:

Ձախտողում կազմակերպության մակարդակում

Ձեռնարկատիրության արդյունավետությունը գնահատելու համար երբեմն նախընտրում են օգտագործել ոչ թե շուկայից ելքի արգելքների, այլ գոյատևման արգելքների հայեցակարգը: Հաջողակ նորաստեղծ ընկերությունները բնութագրվում են գոյատևման արգելքները հաղթահարելու ունակությամբ: Չնայած ձեռնարկատերերը, որպես կանոն, մշտապես ենթարկվում են կազմակերպությունից դուրս գալու ռիսկի, այնուամենայնիվ, նրանք պահպանում են իրենց բիզնեսի գոյատևման հույսը⁵⁰: Այս տեսանկյունից՝ գոյատևելը նոր բիզնեսի համար դառնում է հաջողության հիմնական ցուցանիշ: Իսկ ծախսողված են համարվում այն ձեռնարկատերերը, ովքեր ի վիճակի չեն սեփական բիզնեսը կենսունակ պահելու⁵¹:

Ձախտողում անձնային մակարդակում

Երբեմն կազմակերպության իրավական «մահը» պարտադիր չի նշանակում ձեռնարկատիրոջ անձի սոցիոլոգիական վախճան: Բանն այն է, որ կազմակերպությունը կարող է հանդես գալ վերակազմակերպված նոր իրա-

⁴⁹ St'u **Архипова О. В.**, Анализ провалов государства и провалов рынка в сравнительной форме. Вестник Челябинского государственного университета, 2010, № 27 (208). Экономика. Вып. 29, էջ 12–16: <http://cyberleninka.ru/article/n/analiz-provalov-gosudarstva-i-provalov-rynka-v-sravnitelnoy-forme>

⁵⁰ St'u **Shepherd D.A., Douglas E.J., Shanley M.**, New venture survival: ignorance, external shocks, and risk reduction strategies, Journal of Business Venturing, vol.15, 2000, n. 5-6, էջ 393–410:

⁵¹ St'u **Chrisman J.J., Bauerschmidt A., Hofer C.W.**, The Determinants of New Venture Performance: An Extended Model, Entrepreneurship Theory and Practice, vol. 22, 1999, n.1, էջ 5–29:

վաբանական անձի տեսքով: Բացի անվճարունակության իրավիճակից, ծախսողում կարող է տեղի ունենալ նաև կազմակերպությունների միաձուլման և կլանման դեպքում: Կազմակերպության մահը կարող է պայմանավորվել ոչ միայն ֆորմալ սնանկացման երևույթով, այլև նոր կորպորատիվ միավորի կազմակերպական նույնականացմամբ: Բայց կազմակերպության «մահն» արձանագրելու համար կազմակերպական նույնականացումը չի կարելի դիտարկել որպես գլխավոր սկզբունք:

Դժվար է կանխատեսել նոր կազմակերպության «մահը»՝ ելնելով կազմակերպական կառուցվածքից, որն արտացոլվում է դրա առանձնահատկության, կայունության և հետևողականության բնութագրերով:

Պատճառների տեսանկյունից՝ ծախսողման անձնային մոտեցման պարագայում առանցքային է համարվում ձեռնարկատիրոջ սպասումը, որը թույլ է տալիս բացատրել, թե տվյալ ձեռնարկատերն ինչու է որոշում դադարեցնել ձեռնարկատիրական գործունեությունը: Հետևաբար՝ ձեռնարկատիրական ելքը կապված է նաև ձեռնարկատիրոջ սպասումների հետ⁵²: Ելքի անձնային մակարդակը հիմնվում է ձեռնարկատիրոջ նպատակի և նվաճման տարբերության վրա⁵³: Փաստորեն, դա կարող է կապվել անձնային բավարարվածության (անբավարարվածության) հետ, ինչը որևէ բանի նվաճման (չնվաճման) կամ որոշակի ձգտումների ու սպասումների իրականացման (չիրականացման) արդյունք է:

Այսպիսով՝ ձեռնարկատիրական ծախսողումը հոգեբանատնտեսագիտական երևույթ է, որը պետք է քննարկել դետերմինիստական, վոյունտարիստական և զգացմունքային հայացքների համատեղման միասնական տեսամեթոդաբանական հիմքով: Ձեռնարկատիրության ավարտը հասկանալու համար հարկ է կատարել ծախսողման մակարդակների վերլուծություն «2/2» սխեմայով (շուկա-պետություն/կազմակերպություն-անհատ)՝ ելնելով հանդիպակաց ծախսողման գործընթացների օբյեկտիվ գոյությունից:

Օգտագործված գրականություն

1. Архипова О.В., Анализ провалов государства и провалов рынка в сравнительной форме. Вестник Челябинского государственного университета, № 27 (208), 2010. <http://cyberleninka.ru/article/n/analiz-provalov-gosudarstva-i-provalov-rynka-v-sravnitelnoy-forme>
2. Cultural sense making of entrepreneurial failure. Journal of Business Venturing, 26 (1), 2011.
3. Carree M.A., Verheul I., What makes entrepreneurs happy? Determinants of satisfaction among founders. J. Happiness Stud., 13 (2), 2012.
4. Chrisman J.J., Bauerschmidt A. et Hofer C.W., The Determinants of New Venture Performance: An Extended Model Entrepreneurship Theory and Practice, vol. 22, n.1, 1999.
5. Cooper A.C., Challenges in Predicting New Firm Performance. Journal of Business Venturing, 8 (3), 1993.
6. Cooper A.C., Artz W.A., Determinants of satisfaction for entrepreneurs. Journal of Business Venturing, 10 (6), 1995.
7. De Tienne D.R., Shepherd D.A., De Castro J.O., The fallacy of “only the strong survive”: the effects of extrinsic motivation on the persistence decisions for underperforming firms. Journal of Business Venturing, 23 (5), 2008.

⁵² Տե՛ս Ucbasaran D., Westhead P., Wright M., Flores M., The nature of entrepreneurial experience, business failure and comparative optimism. Journal of Business Venturing 25 (6), 2010, էջ 541–555:

⁵³ Տե՛ս Cooper A.C., Artz W.A., նշվ. աշխ., էջ 439–457:

8. DeTienne D. R., Entrepreneurial exit as a critical component of the entrepreneurial process: Theoretical development. *Journal of Business Venturing*, 25 (2), 2010.
9. DeTienne D.R., Cardon M., Impact of founder experience on exit intentions. *Small Bus. Econ*, 38 (4), 2012.
10. Everett J., Watson J., Small business failure and external risk factors. *Small Bus. Econ*, 11 (4), 1998.
11. Gimeno J., Folta T.B., Cooper A.C., Woo C.Y., Survival of the fittest? Human capital and the persistence of underperforming firms. *Adm. Sci. Q.*, 42 (4), 1997.
12. Hannan M.T., Freeman J., The population ecology of organisations. *Am. J. Sociol.* 82 (5), 1977.
13. Hay M., Verdin P., Williamson P., «Successful new ventures: Lessons for entrepreneurs and investors», *Long Range Planning*, vol.26, n.5, 1993.
14. Hayward M. L. A., Shepherd D. A., Griffin D., A hubris theory of entrepreneurship. *Management Science*, 52(2), 2006.
15. Jenkins A.S., Wiklund J., Brundina E., Individual responses to firm failure: appraisals, grief, and the influence of prior failure experience. *Journal of Business Venturing*, 29 (1), 2014.
16. Littunen H., Storhammar E., Nenonen T., The survival of firms over the critical first 3 years and the local environment. *Entrepreneurship & Regional Development*, 10(3), 1998.
17. McGrath R. G., Falling forward: Real options reasoning and entrepreneurial failure. *Academy of Management Review*, 24 (1), 1999.
18. Mellahi K., Wilkinson A., Organizational failure: a critique of recent research and a proposed integrative framework, *International Journal of Management Reviews*, 5-6(1), 2004.
19. Minniti M., Levesque M., Entrepreneurial types and economic growth. *Journal of Business Venturing*, 25(3), 2010.
20. Nabil Khelil, The many faces of entrepreneurial failure: Insights from an empirical taxonomy, *Journal of Business Venturing*, 31, 2016.
21. Shane S., Venkatarama S., The premise of entrepreneurship as a field of research. *Academy of Management Review*, 25(1), 2000.
22. Shepherd D.A., Douglas E.J., Shanley M., New venture survival: ignorance, external shocks, and risk reduction strategies, *Journal of Business Venturing*, vol.15, n. 5-6, 2000.
23. Singh S., Corner P., Pavlovich K., Coping with entrepreneurial failure. *Journal of Management & Organization*, 13(4), 2007.
24. Ucbasaran D., Westhead P., Wright M., Flores M., The nature of entrepreneurial experience, business failure and comparative optimism. *Journal of Business Venturing*, 25(6), 2010.
25. Van Gelder J.L., Vries R.E., Frese M., Goutbeek J.P., Differences in psychological strategies of failed and operational business owners in the Fiji Islands. *J. Small Bus. Manag*, 45(3), 2007.
26. Vaillant Y., Lafuente E., Do different institutional frameworks condition the influence of local fear of failure and entrepreneurial examples over entrepreneurial activity? *Entrepreneurship & Regional Development*, 19(4), 2007.
27. Wennberg K., Wiklund J., DeTienne D. R., Cardon M. S., Reconceptualizing entrepreneurial exit: Divergent exit routes and their drivers. *Journal of Business Venturing*, 25(4), 2010.
28. Wennberg K., Entrepreneurial Exit. In L. P. Dana (Ed.), *World Encyclopedia of Entrepreneurship*, 2011.
29. Wernerfelt B., A resource-based view of the firm. *Strateg. Manag. J.*, 5(2), 1984.
30. Zacharakis A.L., Meyer G.D., De Castro J., Differing perceptions of new venture failure: a matched exploratory study of venture capitalists and entrepreneurs, *Journal of Small Business Management*, vol. 37, n.3, 1999.

МИКАЕЛ МАРДУМЯН

Заведующий кафедрой коммерции и организации бизнеса АГЭУ,
кандидат экономических наук, доцент

Вокруг вопроса методологии исследования бизнес-неудачи. – Продолжаются научные споры, происходящие в рамках двух подходов вокруг вопросов: "что такое предпринимательская неудача и почему некоторые предприятия и/или предприниматели терпят неудачу". Первый из подходов пытается объяснить неудачу с точки зрения существования предпринимательства, второй же – комментирует ее с точки зрения предпринимателя. В существующих исследованиях недостаточное внимание уделяется теоретико-методологическому переосмыслению неудачи. Мало работ относительно глобального восприятия этого многогранного явления. Целью данной статьи является предложение анализа с использованием единой теоретико-методологической основы для объективного восприятия предпринимательской неудачи в формате "рынок-государство – организация-индивид".

Ключевые слова: неудача, подход неудачи, встречающаяся неудача.

JEL: M2, M20, M29

MIKAEL MARDUMYAN

Head of the Chair of Commerce and Business Organization at ASUE,
PhD in Economics, Associate Professor

The Study of Methodology of Business Failure. – The scientific debates around the questions "What is business failure, why do some companies and/or entrepreneurs fail?" continue within the circles of two approach methods. One of them is trying to explain the failure in terms of the survival of the enterprise, and the second discusses it from the perspective of the perception of the entrepreneur. There is not enough attention paid to the study of reconsidering the methodology of business failure. There are few works on the inclusive understanding of this diverse and multilateral process. Using a single-acting theoretical-methodological basis this article aims to offer "market-state/company-individual" format of failure analysis for an objective comprehension of the business failure.

Key words: failure, failure approach, oncoming failure.

JEL: M2, M20, M29